

ՏԵՍԱՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶԿԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ԽԹԱՆՈՂ ՄԻՋՈՑ*

Նույն թովմայան, Ռուզան Ղազարյան
Երևանի պետական համալսարան

Սույն հոդվածը նպատակ ունի ներկայացնելու անգլերենի ուսուցման գործընթացում նոր տեխնոլոգիաների կիրառման մի քանի օրինակ և լուսաբանելու դրանց արդյունավետությունը: Մասնավորապես՝ խոսքն այստեղ վերաբերում է ուսանողների կողմից նկարահանված տեսանյութերի, դրանց ստեղծման նպատակների և ձեռք բերված արդյունքների կարևորմանը: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տեսանյութերի պատրաստումը նպաստում է միանգամից լեզվական մի քանի հմտությունների զարգացմանը, քանի որ դրանով իսկ ուսանողները կենդանի խոսքը կոնկրետ իրավիճակներում կիրառելու և պատկերների միջոցով ընթերցածն ավելի սահուն արտահայտելու հնարավորություն են ստանում, որն էլ նպաստում է ոչ միայն բանավոր այլ հետազայում նաև գրավոր խոսքի զարգացմանը:

Այս ուսումնասիրությունը գալիս է հաստատելու, որ անգնահատելիորեն կարևոր է արժևորել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ճանաչողական, տեղեկատվական, կրթական, դաստիարակչական ու ուսուցողական դերը, և օտար լեզուների դասավանդման գործընթացների արդյունավետությունը մեծապես պայմանավորված է ժամանակակից տեխնոլոգիաների՝ դասապրոցեսում հմուտ ներդրման հաջողությունից:

Բանալի բառեր. նոր տեխնոլոգիաներ, տեսանյութեր, օտար լեզվի դասընթաց, արդյունավետ, սահուն խոսք, բանավոր և գրավոր խոսք:

*«Ես լսում եմ և մոռանում եմ,
Ես տեսնում եմ և հիշում եմ,
Ես անում եմ և հասկանում եմ»:*
(Կոնֆուցիուս)

Ներածություն

Ներկայումս մենք ապրում ենք այնպիսի դարաշրջանում, երբ մարդկային հաղորդակցությունը զնալով ավելի ու ավելի է ընդլայնում իր շրջանակը, առաջ քաշում նորանոր պահանջներ: Այսօր արդեն որևէ մեկը չի կասկածում, որ անկարելի է իրագործել տնտեսական, քաղաքական, կրթական ու գիտական ինտեգրացում, եթե մարդը չունի միջմշակութային հաղորդակցման համար անհրաժեշտ գիտելիքներ ու հմտություններ:

Այս ամենը նշանակում է, որ միջմշակութային իրազեկությունը դարձել է արդյունավետ հաղորդակցության իրականացման կարևորագույն նախապայմաններից մեկը, և այն պետք է անհրաժեշտաբար ուսուցանվի այս կամ այն օ-

* Հոդվածն ընդունվել է տպագրության 17.10.2016:

տար լեզվի ուսուցմանը զուգահեռ: Սակայն փորձը ցույց է տալիս, որ սոսկ ավանդական մեթոդների կիրառմամբ հնարավոր չէ հասնել ցանկալի արդյունքի: Եվ քանի որ տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու հմտություններին տիրապետելն այսօր ժամանակակից մարդու համար այցեքարտ է դարձել, տարաբնույթ տեխնոլոգիական միջոցները փոխել են ժամանակի ու տարածության մասին մեր ունեցած պատկերացումները, և մենք ամեն վայրկյան կարող ենք բախվել ոչ միայն տարբեր օտար լեզուներ (գլխավորապես անգլերեն) գործածելու անհրաժեշտությանը, այլև կարիք զգանք օգտվելու տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորություններից, ապա ամենևին էլ տարօրինակ չէ, որ փոխվում են նաև օտար լեզուների ուսուցմանը ներկայացվող պահանջները:

Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման արդյունավետ փորձ

Հարկ է հաշվի առնել, որ հեռահաղորդակցական միջոցները ուսուցողական նպատակների ծառայեցնելը զգալիորեն փոխում է դրանց և՛ գործառույթները, և՛ բովանդակությունը: Ակնհայտ է, սակայն, որ միշտ էլ անհրաժեշտություն է զգացվում տեղայնացնելու այդ տեխնոլոգիաները: Տեխնիկական բուհի ուսանողներն, իհարկե, շատ ավելի լավ են տիրապետում այդ միջոցներին, բայց դա չի նշանակում որ դրանք չեն կարող արդյունավետ կիրառություն գտնել նաև հումանիտար թևի դասավանդման պրակտիկայում: Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ճանաչողական, տեղեկատվական, կրթական, դաստիարակչական դերն ու ուսուցողական ներուժը ցանկացած բնագավառում կասկած չեն հարուցում: Ջարմանալի չէ, հետևաբար, որ նոր տեխնոլոգիաների զարգացման ու առավել մատչելի դառնալուն զուգընթաց, մեծանում է դրանց դերը օտար լեզվի դասավանդման ծրագրերում, քանի որ դրանք անխուսափելիորեն իրենց նպաստն են բերում դասընթացում նոր մոտեցումների ու մեթոդների կիրառման և ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու գործին:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը հնարավորություն է ընձեռում լսարանային պայմաններում շատ արագ ուսումնասիրելու օտարալեզու խոսքն ու ժեստերը խոսողի համար բնորոշ իրադրություններում: Ավելին՝ այն փորձ է անում նաև որոշարկելու օտարալեզու մասնագետների լեզվական վարքագիծը՝ այն ներկայացնելով մասնագիտական հաղորդակցության առանձնահատկությունները բացահայտելու ճանապարհով և որոշարկելով այն պայմանները, որոնք ըստ էության կարևոր նախադրյալ են միջմշակութային հաղորդակցության իրականացման համար: Այսօր արդեն ակնհայտ է, որ միայն մասնագիտական կամ լեզվական գիտելիքները բավարար չեն մասնագիտական և միջանձնային մակարդակներում հաղորդակցություն ապահովելու համար: Բանն այն է, որ օտար լեզու սովորող ուսանողներից շատերը ստիպված են մեծ դժվարություններ հաղթահարել ոչ միայն բանավոր հաղորդակցման հմտությունների տիրապետման հասնելու և մեծ լսարանների առջև հանդես գալու համար, այլև նշակութային իրազեկվածություն ձեռք բերելու և պատկերացում ունենալու տվյալ օտար լեզվակիր ժողովրդի աշխարհընկալման ու մտածելակերպի առանձնահատկությունների մասին:

Ահա, այստեղ է, որ օգնության է գալիս ուսանողների ուժերով տեսանյութերի պատրաստման մեթոդի կիրառումը, որը ոչ միայն հետաքրքիր է, այլև մե-

ծապես խթանում է ուսանողների մոտիվացվածությունն ու հնարավորություն տալիս նրանց առավել ինքնավստահ ու անկաշկանդ ներկայացնելու իրենց ինչպես լեզվական գիտելիքներն ու խոսքային հմտությունները, այնպես էլ միջմշակութային իրազեկվածությունը:

Այս փորձը ներդրվեց ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետի երրորդ կուրսում, և ուսանողներին տրված՝ երեքից-հինգ րոպե տևողությամբ տեսանյութերի պատրաստման հանձնարարության կատարումն ու ստացված արդյունքների ներդրումը դասապրոցեստում տվեցին դրական արդյունքներ:

Ուսանողներից պահանջվում էր տեսանյութերում ներկայացնել իրենց լրագրողական գործունեության առաջին փորձերը՝ ի ցույց դնելով անզլերեն ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր հարցազրույց վարելու տեխնիկան և կիրառելով անցած բառապաշարն ու ձեռք բերած այլ հմտություններ: Սա իրականացվեց որոշակի տեխնիկական միջոցների գործադրումով, որն էլ հնարավորություն տվեց նրանց դրսևորելու առավել ստեղծագործական մոտեցում՝ նկարահանել նյութը, ապա խմբագրել այն՝ հագեցնելով գրաֆիկական պատկերներով, լուսանկարներով և երաժշտական ձևավորմամբ:

Իհարկե, կարևոր է նշել, որ այս հանձնարարության կատարումը չէր կարող իրականացվել հանպատրաստի, քանի որ տեսաֆիլմի սցենարը գրելու համար անհրաժեշտ էր ինչպես որոշակի լեզվական գիտելիքների ամրապնդում. բառապաշարի և քերականական կառույցների կրկնություն տարաբնույթ վարժությունների կատարմամբ, այնպես էլ միջմշակութային տեղեկատվության տիրապետում, ընդ որում՝ դասախոսն այս գործընթացում կատարում էր խորհրդատուի դեր, օգնում շտկել լեզվական, ոճական կամ քերականական սխալները, հիշեցնում անզլերենի բառադարձվածային և շարահյուսական կապակցելիության կանոնները, նաև տրամադրում որոշակի մշակութային տեղեկություններ պարունակող նյութեր:

Սրան հաջորդեց գրավոր սցենարների և հարցազրույցը վարելու համար անհրաժեշտ հարցադրումների պատրաստումը, որոնց քննարկումից և համապատասխան շտկումներից հետո նրանք ձեռնամուխ եղան տեսանյութերի պատրաստման գործին: Ուսանողներից ոմանք, որոնք ընտրել էին հարցազրույցի տարբերակը, կարողացան հաջողությամբ իրականացնել իրենց առջև դրված խնդիրը, քանի որ մեծ ջանքեր էին գործադրել՝ առաջնորդվելով լրագրողների համար մեր դասընթացով նախատեսված անզլերեն հարցազրույց վարելու հմտությունների զարգացմանն ուղղված դրույթներով և ներգրավելով իրենց անզլախոս ընկերներին, ծնողներին ու անզլալեզու ծանոթներին, որոնք բոլորն էլ այս կամ այն չափով տիրապետում էին անզլերենին:

Հարցազրույցներից բացի նախատեսված էին նաև փաստավավերագրական ֆիլմեր կամ ֆոտո պատմություններ՝ ուսանողների նախընտրությամբ: Ուսանողների գերակշռող հատվածն ընտրեց ֆոտո պատմություններ ստեղծելու տարբերակը, և տարբեր լուսանկարներ, հուշեր, կյանքից բերվող հետաքրքիր դրվագներ տրամաբանական հերթականությամբ ներկայացնելու և գրաֆիկական տարբեր հնարանքների գործադրմամբ՝ նրանք ձևավորեցին իրենց կամ իրենց ծանոթների կյանքի համառոտ պատմություններն ու ցուցադրեցին դասի ընթացքում PowerPoint ծրագրի կիրառմամբ:

Հարկ է նշել, որ ուսանողները մեծ ոգևորությամբ և պատասխանատվությամբ էին վերաբերվում հանձնարարությանը, որն էլ կարևոր նախապայման էր ստացված դրական արդյունքներն ապահովելու համար: Տեսաֆիլմերի կիրառմամբ դասավարդման այս փորձը ցույց տվեց, որ ոչ պակաս արդյունավետություն կարելի է ապահովել նաև՝ ընդլայնելով տեսաֆիլմերի թեմատիկ դաշտը՝ առաջարկելով ուսանողներին սցենարները գրել հայտնի անգլիացի ու ամերիկացի գրողների կարճ պատմվածքների հիման վրա: Սա մի կողմից կտրամադրի ուսանողներին կարդալ ընտրված ստեղծագործությունները ուսումնասիրվող օտար լեզվով, դուրս քաղել ակտիվ բառապաշարը, որն անհրաժեշտ է սցենարը գրելիս, մյուս կողմից կզարգացնի նրանց վերլուծական կարողությունները՝ ապահովելով պատմվածքի հասկացման որոշակի մակարդակ՝ առանց որի անհնար է տեսաֆիլմի ստեղծումը:

Ոչ պակաս արդյունավետության կարելի է հասնել նաև այն դեպքում, եթե տեսանյութերի ստեղծման գործընթացն իրականացվում է թիմային աշխատանքով, որի ընթացքում ուսանողները վարժվում են թիմային համագործակցության՝ ստանձնելով որոշակի պատասխանատվություն նաև թիմի մյուս անդամների համար:

Եզրակացություն

Այսպիսով՝ դասավանդման մեր փորձը զալիս է հաստատելու, որ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը լրագրող ուսանողների համար նախատեսվող մասնագիտական կողմնորոշման դասընթացում միանգամայն կարևոր է օտար լեզվի ուսուցման մակարդակը բարձրացնելու համար: Մասնավորապես՝ տեսաֆիլմերի կիրառման մեթոդը կարող է կարևոր խթանիչ դեր կատարել դասապրոցեսի ակտիվացման գործում, հնարավորություն տալ զարգացնելու ուսանողների օտար լեզվական, նաև միջմշակութային տարբեր հմտություններ, սովորեցնել նրանց ազատ ու անկաշկանդ արտահայտել իրենց մտքերն ու կարծիքները տվյալ լեզվով, հաղթահարել նյութի ընտրության դժվարությունները և պատշաճ ձևով ներկայացնել սեփական մոտեցումներն ու տեսակետները՝ ըստ էության դառնալով ուսանողների ուսումնառության մոտիվացվածությունը բարձրացնելու կարևորագույն գործիք:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ryan, S. (1998) *Using films to Develop Learner Motivation*. // The Internet TESL Journal 4, No. 11: November. Available at: <[http:// iteslj.org/Articles/Ryan-Films.html](http://iteslj.org/Articles/Ryan-Films.html)> [Accessed September 2016].
2. Weyers, J.R. (2007) *The Effect of Authentic Video on Communicative Competence*. // Modern Language Journal, 83(3), London. Available at: <<https://www.jstor.org/stable/330257>> [Accessed October 2016].
3. Brooke, S. (2003) *Video Production in the Foreign Language Classroom*. // The Internet TESL Journal, Vol. IX, No. 10, October. Available at: <<http://iteslj.org/Techniques/Brooke-Video.html>> [Accessed September 2016].

4. *Introduction to PPP Methodology for TEFL*. Available at: <<https://seetefl.com/ppp-tefl-teaching-methodology>> [Accessed November 2016].
5. *Video for the English Classroom*. Available at: <<https://www.teaching-english.org.uk>> [Accessed November 2016].

Producing Video Material as a Motivating Tool in ELT

As technology becomes more and more readily available to students we believe it should be integrated into our lesson and assessment planning, thus developing the students technologically assisted learning strategies. Students are surrounded by technology and this technology can provide interesting and new approaches to language learning. In the article we make an attempt to outline some of the methods and approaches we have employed in the use of video cameras as teaching and learning tools at the department of Journalism.

Подготовка видеоматериалов как средство стимулирования преподавания иностранного языка

Целью данной статьи является представление нескольких примеров применения новых технологий в процессе преподавания английского языка и освещение их эффективности. В частности, речь идет о видеоматериалах, снятых студентами, целях их создания и важности полученных результатов. Исследование показывает, что подготовка видеоматериалов способствует развитию сразу нескольких навыков, поскольку тем самым студенты получают возможность применять живую речь в конкретных ситуациях и с помощью изображений излагать прочитанное более плавно, что способствует развитию не только устной, но в дальнейшем и письменной речи.